

**ԻՐԱՆԻ ԻՍԼԱՄԱԿԱՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՄԵՄԱՏԱԿԱՆ
ԱՌԱՎԵԼՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԵՏ ԴՐԱՆՑ
ԸՆԴՀԱՆՐՈՒԹՅՈՒՆՆԵՐՆ ՈՒ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ**

Թորոս ԹՈՐՈՍՅԱՆ

Տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր

Մաջիդ ԱՖՐԱ

Հայաստանի ազգային ագրարային համալսարանի ասպիրանտ

Բանալի բառեր. Իրանի Իսլամական Հանրապետություն, Հայաստանի Հանրապետություն, համեմատական առավելություն, ռեսուրսային կազմ, արտահանում

Համաշխարհային փորձը ցույց է տալիս, որ երկրի ունեցած համեմատական և մրցակցային առավելությունները հանդիսանում են երկրի զարգացման հիմքը: Համեմատական առավելության առկայության համար անհրաժեշտ առաջին փուլը ռեսուրսների առկայությունն է, իսկ երկրորդը՝ դրանց կառավարման արդյունավետությունը: Այս համատեքստում անդրադառնալով Իրանի տնտեսությանը՝ հարկ է նշել, որ այստեղ շատ բազմազան են բնական ռեսուրսները, սակայն այն հատկապես աչքի է ընկնում նավթի և գազի հսկայական պաշարներով: Իրանին բաժին է ընկնում համաշխարհային նավթի պաշարների 10%-ը¹: Հարկ է նշել, որ Իրանի Իսլամական Հանրապետությունը Նավթ արտահանող երկրների կազմակերպության (Organization for Petroleum Exporting Countries, OPEC) մեջ Սաուդյան Արաբիայից հետո երկրորդ ամենախոշոր նավթ արդյունահանող երկիրն է: Կան քարածխի, երկաթաքարի, պղնձի, բազմամետաղների բոքսիտների, ծծմբի, ծարիրի, քարաղի հանքավայրեր: Ունեցած գազի պաշարներով ԻԻՀ-ն Մերձավոր Արևելքում զբաղեցնում է 1-ին տեղը: Նավթագազային արդյունաբերությունն ապահովում է ԻԻՀ-ի արտահանման 80%-ը: ԻԻՀ-ն ունի նաև ոսկու, արծճի, արծաթի ու ֆոսֆորի զգալի պաշարներ:

Բացի այդ, ԻԻՀ-ում համեմատաբար զարգացած են նաև նավթաքիմիական ապրանքների արտադրությունը, լեռնամետալուրգիական արդյունաբերությունը, մեքենաշինությունը, տեքստիլ արդյունաբերությունը, շինանյութերի և սննդամթերքների արտադրությունները (հատկապես՝ շաքարի վերամշակումը և բուսական յուղերի արտադրությունը) և գյուղատնտեսությունը: ԻԻՀ-ն համարվում է ցեմենտ և պղինձ արտադրող աշխարհի առաջատար 10 երկրներից մեկը, աշխարհում նա 17-րդ տեղն է զբաղեցնում պողպատի արտադրությամբ, 5-րդ տեղը՝ սալիկների և կերամիկայի արտադրությամբ, իսկ փիրուզի արդյունահանմամբ և արտադրությամբ աշխարհում գրավում է 1-ին տեղը, ինչպես նաև՝ 1-ին տեղում է զետնանուշի և զաֆրանի արտահանմամբ: Բացի այդ, ԻԻՀ-ն հանդիսանում է տուրիստների համար ամենագրավիչ 10

¹ Ibp Usa, USA International Business Publications, Iran: Country guide, Volume 1, 2011, p.275

երկրներից մեկը: Այստեղ են գտնվում բազմաթիվ սրբավայրեր և հնագույն ճարտարապետական կոթողներ, որոնք գրավում են զբոսաշրջիկներին: Ըստ ՄԱԿԳՄԿ-ի (UNESCO) գնահատման պատմամշակութային արժեքներով ԻԻՅ-ն աշխարհում զբաղեցնում է 3-րդ տեղը²: Ջրային ռեսուրսներով աղքատ է: Ոռոգման նպատակով կառուցվել են արհեստական ջրամբարներ, լայնորեն օգտագործվում են ստորերկրյա ջրերը: Անտառները զբաղեցնում են երկրի տարածքի մոտ 11%-ը: Ծովերը հա-րուստ են ձկներով:

Այսպիսով՝ Իրանի ռեսուրսային կազմի վերլուծությունը ցույց է տալիս, որ համաշխարհային տնտեսությունում Իրանի համեմատական առավելությունները կարող են պայմանավերված լինել նախ և առաջ նավթի, գազի, քարածխի, մետաղների, ծծումբի և դրանց վերամշակման ոլորտներում: Իսկ գյուղատնտեսության ոլորտում Իրանի կողմից համեմատական առավելություն գրանցելու հիմքերը որոշակիորեն նվազում են՝ կապված ոռոգման համակարգի խնդիրների հետ: Ինչ վերաբերում է արդյունաբերությանը, ապա ներկայիս տնտեսական իրավիճակն ուսումնասիրելով՝ մենք հանգեցինք այն եզրակացության, որ Իրանը արդյունաբերության ոլորտում համեմատական առավելություն կարող է գրանցել սննդարդյունաբերության, գորգագործության և մեքենաշինության ոլորտներում՝ ելնելով ներկայումս արդեն ձևավորված իրավիճակից և ռեսուրսային հնարավորություններից: Սակայն արդյունաբերության նշված ոլորտներում համեմատական առավելությունների դրսևորումների լուրջ խոչընդոտ է արտաքին տնտեսական ոչ բարենպաստ վիճակը, հատկապես՝ ներմուծման բարձր մաքսատուրքերը, ներդրումների պակասը, Իրանի նկատմամբ կիրառվող պատժամիջոցները:

Արտաքին տնտեսական քաղաքականության տեսանկյունից նշենք, որ որքան էլ ներկայումս Իրանում իրականացվող արտաքին առևտրային քաղաքականության ոլորտի բարեփոխումները ավելի դրականորեն են նպաստում Իրանի համեմատական առավելությունների դրսևորման հարցում, քան նախկինում, այդուհանդերձ արտաքին առևտրային քաղաքականությունը դեռևս շատ հեռու է համեմատական առավելությունների իրական դրսևորումներին ի նպաստ գործելուց, այն Իրանում դեռևս համեմատական առավելություն-ների դրսևորման խոչընդոտող հանգամանք է: Մասնավորապես՝ զգալիորեն բարձր են ինչպես վերամշակման ենթակա ապրանքների, այնպես էլ մեքենասարքավորումների ներմուծման մաքսադրույքները, ինչը որոշակի ոլորտում անգամ համեմատական առավելության առկայութեամբ պարագայում կնվազեցնի համեմատական առավելությունը կամ իսպառ կչեզոքացնի այն: Բացի այդ ոչ մաքսային հովանավորչության եղանակները ևս նվազեցնում են

² www.news.iran.ru/news/80702

համեմատական առավելության դրսևորման հնարավորությունը: Ստացվում է, որ համեմատական առավելությունների լավագույնս դրսևորման համար արտաքին տնտեսական քաղաքականության ոլորտում դեռևս զգալի բարեփոխումներ են անհրաժեշտ: Իրանի հետ Հայաստանի տնտեսական և քաղաքական հարաբերությունների զարգացումը երկու երկրների ազգային և պետական շահերի տեսանկյունից ունի կենսական նշանակություն:

Անհրաժեշտ է որոշակիորեն կատարելագործել երկու երկրների առևտրային հարաբերությունները: Մասնավորապես, Իրանից Հայաստան արտահանվող ապրանքները պետք է ապահովված լինեն որակական հատկանիշներով, որպեսզի կարողանան դիմանալ եվրոպական, ռուսական և թուրքական ապրանքների մրցակցությանը: Ավելին, Իրան-Հայաստան առևտրային համագործակցությունը կարելի է խորացնել գյուղատնտեսական մթերքների առևտրի տեսանկյունից: Մասնավորապես, Հայաստանում առկա է գյուղատնտեսական հողերի թերզբաղվածություն, հետևաբար լրիվ իրատեսական է մասուրի ու թեյի վարդի պլանտացիաներ ստեղծելու գաղափարը, առավել ևս, որ նշված մշակաբույսերի աճեցումը հնարավորություն կտա զարգացնելու նաև դրանց հետ առնչվող շատ հարակից ճյուղեր: Մասուրի և վարդի հասունացումը Հայաստանում համընկնում է իսլամական երկրներում ռամադանի շրջանի հետ (մասուրի և վարդի թերթիկների հյութերը, հատկապես Ռամադանի ժամանակ, որպես ըմպելիք լայնորեն օգտագործվում են Պարսից ծոցի երկրներում), ուստի առկա է բավականին մեծ ծավալով դրանց արտահանման իրական հնարավորություն:

Այսպիսով, կարող ենք փաստել, որ ՀՀ և ԻԻՀ ունեն զարգացման մեծ հնարավորություններ, որոնք պետք է օգտագործվեն լիակատար ձևով: Սակայն, ինչպես ցույց տվեց կատարված ուսումնասիրությունը՝ երկու երկրների միջև ձևավորված արտաքին առևտրային կապերը, հատկապես՝ արտահանման և ներմուծման կառուցվածքի առումով, չեն կարող բավարար լինել տարածաշրջանային տնտեսական ինտեգրման գործընթացների առումով: ԻԻՀ հետ ՀՀ առևտրատնտեսական կապերի կարգավորման համար անհրաժեշտ հատուկ ուշադրություն դարձնել փոխադարձ պետական և մասնավոր ներդրումների և առևտրի խրախուսման և պաշտպանության հարցերին: Երկու երկրների արտաքին տնտեսական քաղաքականության բաղադրիչ մաս պետք է հանդիսանա տեղական արտահանողների համար միմյանց շուկաներում բարենպաստ պայմանների ստեղծումը: Այսուհանդերձ, Իրան-Հայաստան առևտրային քաղաքականությունը ճիշտ հուն ուղղորդելու համար անհրաժեշտ է բացահայտել ՀՀ-ի համեմատ ԻԻՀ ունեցած համեմատական առավելությունը: ՀՀ-ի համեմատ ԻԻՀ համեմատական առավելությունների բացահայտման նպատակով կկիրառենք Բա-լասայի կողմից առաջարկված

մեթոդաբանությունը՝ որոշակի փոփոխություններով. $F_{X_i}=(x_i:X)/(x_i^T:X^T)$, որտեղ՝ x_i -ն Իրանից i -րդ ապրանքի արտա-հանումն է, X -ը՝ Իրանի ընդհանուր արտահանումը, x_i^T -ն՝ i -րդ ապրանքի արտահանումն է Հայաստանից և Իրանից, իսկ X^T -ն Հայաստանի և Իրանի ընդհանուր արտահանումը: Հաշվարկի համար կհիմնվենք ապրանքների միջազգային դասակարգման հարմոնիզացված համակարգից՝ HS2002³: Վերլուծության արդյունքում ստացվում է, որ ԻԻՀ համեմատական առավելությունը ՀՀ-ից հստակ երևում է միայն “27” ծածկագրի ապրանքախմբում⁴, քանի որ F_{X_i} ինդեքսը 2,02 է, մնացած բոլոր դեպքերում, երբ F_{X_i} ինդեքսը >1, այն տատանվում է (1.00001, 1.00005) միջակայքում, այսինքն աննշան է համեմատական առավելությունը: Այդուհանդերձ, բացի վերոնշյալ ապրանքա-խմբից ԻԻՀ համեմատական առավելություն գրանցած մյուս ապրանքա-խմբերն են՝ «միս և մսից մթերքներ», «այլ կենդանական ծագման մթերքներ», «բանջարեղեն և այլ կերային արմատապտուղներ», «սուրճ, թեյ, մատե», «Ալրադացային, ձավարեղենային արտադրանք, «ձիթատու սերմեր, պտուղներ», «բուսական նյութեր հյուսվածքային արտադրանքների պատ-րաստման համար», «շաքար և հրուշակեղեն շաքարից», «ցորենից, այլուրից և կաթից պատրաստված ապրանք», «այլ տարբեր սննդամթերք», «սննդար-դյունաբերության մնացորդներ, պատրաստի անասնակեր», «աղ, ծծումբ, հող և քար», «օրգանական և անօրգանական քիմիական միացություններ», «Քիմիական արտադրության ապրանքների» և «պլաստմասսա, կաուչուկ, ռետին» ապրանքախմբերի բոլոր ենթախմբերը, «խցան և դրանից իրեր», «ծղոտ», «թուղթ և ստվարաթուղթ», «մանածագործական իրեր» ապրանքախմբի գրեթե բոլոր ենթախմբերը՝ բացառությամբ մետաքսի և տրիկոտաժե հագուստի ենթախմբերի, «զլխարկներ», «հովանոցներ», «կերամիկական իրեր», «իրեր սև մետաղից», «արձիճ և դրանից իրեր», «մեքենաներ, սարքավորումներ» ապրանքախմբի բոլոր ենթախմբերը, «վերգետնյա տրանսպորտ», «նավեր, նավակներ և այլ լողացել միջոցներ», «երաժշտական գործիքներ և դրանցմասեր», «Տարբեր արդյունաբերական ապրանքներ» ապրանքախմբի բոլոր ենթախմբերը և «արվեստի գործեր և հնաոճ իրեր» ապրանքախմբերը: Այսպիսով, ստացվում է, որ ԻԻՀ ՀՀ-ի համեմատ ունի հստակ արտահայտված համեմատական առավելություն վա-

³ Հաշվարկների համար կկիրառենք հետևյալ մեթոդաբանությունը. ԻԻՀ արտահան-ման տվյալները կվերցվեն Իրանի վիճակագրական ծառայության կայքից՝ <http://www.amar.org>, դրանք համապատասխան փոխարժեքի միջոցով կներկայացվեն ԱՄՆ դոլարով (փոխարժեքի տվյալները կվերցվեն հետևյալ կայքից՝ <https://www.cia.gov/library/publications/the-world-factbook/fields>), Հայաստանի համապատասխան տվյալները կվերցվեն ՀՀ ԱՎԾ համապատասխան էլեկտրոնային տվյալներից՝ www.armstat.am

⁴ “27” ծածկագրի ներքո HS2002 համակարգում գտնվում է հանքային վառելա-նյութեր, նավթ, նավթամթերք, բիտումային միջոցներ, մոմանյութեր ապրանքախմբերը

ռելանյութի և նավթամթերքի արտահանման ոլորտում, ինչը բնական է՝ ելնելով ԻԻՀ-ի կողմից տնօրինվող ռեսուրսների քանակից: Մյուս նշված ոլորտներում ԻԻՀ-ի համեմատական առավելությունը ՀՀ-ից աննշան է, ինչը հիմք է տալիս լուրջ համատեղ ծրագրերի մշակման և ներդրման:

Թորոս ԹՈՐՈՍՅԱՆ, Մաջիդ ԱՖՐԱ

Իրանի Իսլամական Հանրապետության համեմատական առավելությունները և ՀՀ հետ դրանց ընդհանրություններն ու առանձնահատկությունները

Բանալի բառեր: ԻԻՀ, ՀՀ, համեմատական առավելություն, արտահանում:

Համեմատական և մրցակցային առավելությունները հանդիսանում են երկրի տնտեսական զարգացման հիմքը: Ներկայումս ԻԻՀ-ն ունի բազմաթիվ համեմատական և մրցակցային առավելություններ, ինչի մասին վկայում է գերտերությունների կողմից ԻԻՀ ուղղվող ներդրումների հոսքը: Աշխատանքում վերլուծվում են ԻԻՀ համեմատական առավելությունները, ինչպես նաև ՀՀ-ի հետ դրանց ընդհանրություններն ու առանձնահատկությունները: Աշխատանքի տեղեկատվական հիմքը ԻԻՀ և ՀՀ պաշտոնական վիճակագրությունն է:

Торос ТОРОСЯН, Маджид АФРА

Сравнительные преимущества Исламской республики иран и их сходство и отличие от республики армении

Ключевые слова: ИРИ, РА, сравнительные преимущества, состав ресурсов, экспорт.

Сравнительные и конкурентные преимущества являются основой экономического развития. В данный момент ИРИ имеет множество сравнительных и конкурентных преимуществ, о чем свидетельствует приток иностранных инвестиций в Иран со стороны мировых гигантов. В статье рассматриваются сравнительные преимущества ИРИ, а также их сходство и отличие с РА. Информационной базой для статьи служила официальная статистика ИРИ и РА.

Toros TOROSYAN, Majid AFRA

Comparative advantage of Islamic Republic of Iran and its similarities and differences with Republic of Armenia

Keywords: Islamic Republic of Iran, Republic of Armenia, comparative advantages, structure of resources, export

Comparative and competitive advantages are the basis of economic development for the country. At the moment, the Islamic Republic of Iran has many comparative and competitive advantages, which is evidenced by the inflow of foreign investment in Iran from the global giants. In this article are analyzed the comparative advantages of IRI and its similarities and differences with Republic of Armenia. The information base for the article serves the official statistics of IRI and RA.